JW.ORG

# Ամրապնդիր համոզմունքներդ. կուսություն

Աստվածաշունչն ասում է. «Հեռու մնացեք պոռնկությունից» (1 Թեսաղոնիկեցիներ 4:3): Համոզվիր, որ Աստծու օրենքները քո օգտին են ծառայում և պատկերացրու, թե ինչ կլինի, եթե հետևես կամ չհետևես դրանց:




Աստծու օրենքները չափազանց խի՞ստ են

Ինչո՞ւ է Աստված չամուսնացած անհատներին արգելում մի բան, ինչը կարող է հաճելի լինել:




Այժմ պատկերացրու հետևյալ իրավիճակները

ՏԵՍԱՐԱՆ 1
**ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ**

ՏԵՍԱՐԱՆ 2
**ՃՆՇՈՒՄ**

ՏԵՍԱՐԱՆ 3
**ԱՌԻԹ**

ՏԵՍԱՐԱՆ 4
**ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

Շատ երիտասարդներ, ովքեր նախքան ամուսնանալը սեռական հարաբերություն են ունենում, հետո ափսոսում են: **Քո կարծիքով՝ ինչո՞ւ:**

________________________________________

________________________________________

Ընդհանրապես, աղջիկները նախընտրում են այնպիսի տղաների, որոնք կպաշտպանեն իրենց, ոչ թե կօգտագործեն: Իսկ տղաների մեծ մասի համար գրավիչ չեն այն աղջիկները, որոնք անմիջապես տրվում են իրենց: **Քո կարծիքով՝ ինչո՞ւ:**

________________________________________

________________________________________



www.jw.org © 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania

# ԳՐԻ ԱՌ

Պատասխանիր հետևյալ հարցերին



ՏԵՍԱՐԱՆ 1

## ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ

Ինչո՞ւ սեռական զգացմունքները միշտ չէ, որ պետք է «թշնամի» համարել **(կարդա Առակներ 5:18, 19)**:

Արդյո՞ք սեռական ցանկությունը միակ ուժգին ցանկությունն է, որ դու ունենում ես (Նշիր այլ ցանկություններ):

Անմիջապես բավարարո՞ւմ ես քո ցանկությունները: ԱՅՈ ՈՉ

Ըստ քեզ՝ սեռական ցանկություններդ քո՞ վերահսկողության տակ են: ԱՅՈ ՈՉ

Աստված, ով ստեղծել է մեզ սեռական ցանկություն ունենալու ունակությամբ, ասում է նաև, որ պետք է ինքնատիրապետում զարգացնեք: Փաստորեն, ի՞նչ վստահություն ունի նա մեր հանդեպ **(կարդա 1 Թեսաղոնիկեցիներ 4:4)**:

ՏԵՍԱՐԱՆ 2

## ՃՆՇՈՒՄ

Քո կարծիքով՝ ինչո՞ւ են ոմանք ծաղրում նրանց, ովքեր կույս են:

Ինչո՞ւ հասակակիցներդ գուցե ճնշում բանեցնեն քեզ վրա և հրահրեն սեքսի:

Ինչպե՞ս պետք է վերաբերվես նրանց, ովքեր դրդում են քեզ խախտել Աստծու օրենքը **(կարդա Առակներ 13:20)**:





ՏԵՍԱՐԱՆ 3

## ԱՌԻԹ

Ինչպիսի՞ մարդկանցից, վայրերից կամ իրավիճակներից պետք է խուսափես, որպեսզի անբարոյություն գործելու գայթակղության առաջ չկանգնես:



www.jw.org © 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania

ՏԵՍԱՐԱՆ 4

## ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ



Թեթևաբարո մարդիկ սովորաբար ամուսնությունից հետո էլ չեն փոխում իրենց սովորությունները: Ինչպե՞ս կարող է այս բանի գիտակցումը օգնել քեզ հեռու մնալ սեռական հարաբերությունից նախքան ամուսնությունը **(կարդա Գաղատացիներ 6:7, 8)**:

---

Քո կարծիքով՝ ինչո՞ւ արժե բարոյապես մաքուր մնալ մինչև ամուսնությունը:

---

Հավատո՞ւմ ես, որ Աստծու պատվերներին հնազանդվելը քեզ ավելի երջանիկ կդարձնի, քան հասակակիցներիդ «ազատ» ապրելակերպը որդեգրելը: Եթե այո, ապա ինչո՞ւ:

---

## ՆԱԽԱՊԵՍ ՄՏԱԾԻՐ

### ՏԵՍԱՐԱՆ 1 — ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ

Եթե զգամ, որ ուր որ է տրվելու եմ գայթակղությանը, կվարվեմ հետևյալ կերպ՝

---

### ՏԵՍԱՐԱՆ 2 — ՃՆՇՈՒՄ

Երբ հասակակիցներս ծաղրեն ինձ կույս լինելու համար կամ դրդեն սեռով զբաղվելու, ես կասեմ հետևյալը՝

---

### ՏԵՍԱՐԱՆ 3 — ԱՌԻԹ

Եթե հայտնվեմ այնպիսի իրավիճակում, որ կարող եմ սեռով զբաղվել, կվարվեմ հետևյալ կերպ՝

---

## ԴՈՒ ԿԱՐՈ՞Ղ ԵՍ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼ

Եթե ամրապնդես համոզմունքներդ այժմ, հետագայում կկարողանաս ճիշտ վարվել նույնիսկ ճնշման ներքո:


www.jw.org © 2016 Watch Tower Bible and Tract Society of Pennsylvania